**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**19.06.2026թ. կնքված N «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-26/55» գնման պայմանագրի**

ք. Երևան «13» հուլիսի 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ. Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից «ՇԻՆ ՄԱԳԻՍՏՐԱԼ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ա. Ավագյանի (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենդրությունը և 19.06.2026թ. կնքված N «ԵՔ-ԲՄԱԾՁԲ-26/55» գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, ինչպես նաև Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի գրությունը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Պայմանագրով նախատեսված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի փողոցների, բակերի, բակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնապատման ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման դիմաց վճարման ենթակա գումարը սահմանել 29858000 (քսանինը միլիոն ութ հարյուր հիսունութ հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, համաձայն սույն համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Պայմանագրի գնի մնացած գումարի մասով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

1.3 Հաստատել սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

**2 Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

***3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| Երևանի քաղաքապետարան | «ՇԻՆ ՄԱԳԻՍՏՐԱԼ» ՍՊԸ |
| ք. Երևան, Արգիշտիի փ. 1 | ք. Երևան, Նոր Նորք, Դ. Մալայան փողոց, շենք 20, բն. 45 |
| ՀՀ ֆինանսներ նախարարության գործառնական վարչության | «Կոնվերսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900032098429 | Հ/Հ 1930097171288800 |
| ՀՎՀՀ 02593108 | ՀՎՀՀ 01056319 |
| Վ. Պապիկյան __________ (ստորագրություն) Կ.Տ | Ա. Ավագյան __________ (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված 1
19.06.2026թ. կնքված N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/55 գնման պայմանագրի
«13» Հուլիսի 2026թ. կնքված N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Գնման առարկայի անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | Փետրվարի | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի փողոցների, բակերի, բակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնապատման ընթացիկ նորոգման աշխատանքների | ------- | ------- | ------- | ------- | ------- | ------- | 29858000 | 29858000 | 29858000 | 29858000 | 29858000 | 29858000 | 29858000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի փ. 1
ՀՀ ֆինանսներ նախարարության
գործառնական վարչության
Հ/Հ 900032098420
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՇԻՆ ՄԱԳԻՍՏՐԱԼ» ՍՊԸ
ք. Երևան, Նոր Նորք, Դ. Մալյան փողոց, շենք 20, բն. 45
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 193009717128880
ՀՎՀՀ 01056319

Ա. Ավագյան ______________
(ստորագրություն)
Կ.Տ.

**CONVERSE BANK**

**TRUSTED BY GENERATIONS**

**Հավելված 4**
**ԵՔ-ԲՄԱԾՁԲ-26/55* ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

«09» 07 2026

№ COD/1886

**ԵՐԱՇԽԻՔ N COD/1886**
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից թիվ ԵՔ-ԲՄԱԾՁԲ-26/55 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «ՇԻՆ ՄԱԳԻՍՏՐԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 19.06.2026թ.-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԱԾՁԲ-26/55 «ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ» (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **9,432,500.00 (ինը միլիոն չորս հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, **սակայն ոչ ուշ քան 31.05.2027թ.-ը ներառյալ:** Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱԾՁԲ-26/55 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հարգանքով,**

**Իրավասու անձ**

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ, 00000291, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1
Վարկային գործառնությունների համար
Իրավասու անձ
Authorized person
Աննա Առաքելյան
Anna Arakelyan
ստորագրություն / signature
For Credit Operation
26/1 V. SARGSYAN str., YEREVAN, "CONVERSE BANK" CJSC, 00000291

*Պատասխանատու՝ Բելա Ասատրյան*
*Ներքին հեռախոսահամար՝ 2226*

**CONVERSE BANK**

**TRUSTED BY GENERATIONS**

«09» 07 2026

№ CORO/1887

**Հավելված 5**
**«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/55»* ծածկագրով**
**բաց մրցույթի հրավերի**

**ԵՐԱՇԽԻՔ N CORO/1887**
**(պայմանագրի ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «ՇԻՆ ՄԱԳԻՍՏՐԱԼ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 19.06.2026թ.-ին կնքված թիվ ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/55 «ԿԱՊԻՏԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» (այսուհետ՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **3,144,200.00 (երեք միլիոն մեկ հարյուր քառասունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900015211429 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման վերջնաժամկետի՝ ներառյալ երաշխիքային ժամկետը, օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 31.05.2028թ.-ը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ gor.muradyan@yerevan.am էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/55 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հարգանքով,**

**Իրավասու անձ**

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ, 00000291
Վարկային գործառնությունների համար
Իրավասու անձ
Authorized person
Աննա Առաքելյան
Anna Arakelyan
ստորագրություն / signature
For Credit Operation
26/1 V. SARGSYAN str., YEREVAN "CONVERSE BANK" CJSC, 00000291

*Պատասխանատու՝ Բելա Ասատրյան*
*Ներքին հեռախոսահամար՝ 2226*